Սոֆյա Ավետիսյան

Ծնվել է 1940 թվականի ապրիլի 16-ին Արմավիրի մարզի Ծաղկունք գյուղում: 1949 թվականին ընտանիքի հետ միասին աքսորվել է Ալթայ երկրամասի, Բաեվյան շրջանի, Պակռովկա գյուղ: 1956 թվականի վերադարձել է հայրենիք:

1949 թվականի քաղցած և սովորական օր կլիներ մեր բազմանդամ ընտանիքի համար, եթե առավոտյան դուռը չծեծեին երկու զինվորական: Հայրս՝ Հայրապետը, որը վերջերս էր ազատվել գերմանական գերությունից և վերադարձել հայրենիք, չէր էլ կարող ենթադրել, որ այդ օրվանից ընտանիքով առժամանակ հայտնվելու ենք մեկ այլ «գերության» մեջ:

Համագյուղացի «Փիթի» Խաչիկի սուտ մատնությամբ (իր սանիկի փոխարեն հորս անուն էր տվել) մեր տուն եկած անծանոթներն ասացին, որ շատ արագ հավաքվենք, ինքը տարեկան էի ու էն ժամանակ լավ չէի հասկանում, որ մեզ աքսորում են, բայց շատ լավ հիշում եմ, թե ինչպես էր մայրս՝ Հայկանուշը, արցունքն աչքերին վերջին անգամ կերակրում մեր միակ թխսկան-հավին, որը ընդամենը վերջերս տասը ճուտ էր հանել՝ անսպասելի ուրախություն ու մխիթարանք բերելով մեր սովալլուկ օրերին: Շատ բան չէինք կարող վերցնել, չնայած չունեինք էլ: Ալմաստ տատիս շտապ կանչեցինք մեր տուն, մայրս տան կիսաժանգոտ բանալիները և թխսկան-հավի խնամքը հանձնեց նրան: Դռան դիմաց արդեն մեզ՝ հորս, մորս, երեք եղբայներիս, քրոջս ու ինձ սպասում էր բեռնատար մեքենան և բառիս բուն իմաստով մեզ լցրեցին դրա մեջ: Մինչև գյուղից դուրս գալը գյուղացիները հերթով կանգնեցնում էին մեքենան՝ հրաժեշտ տալիս:

Մեզ տարան կայարան: Մեզ պես էլի շատ ընտանիքներ կային այնտեղ: Նստեցրին բեռնատար վագոն և ճանապարհի ընկանք: Շատ երկար ճանապարհի էր, գրեթե քսան օր գնացինք: Չգիտեմ սովից էր, թե ինչ, բայց լավ հիշում եմ ինչ ախորժակով էինք ուտում վագոնում մեզ տրամադրվող ուտելիքը՝ երշիկը, կաթը, ապուրները:

Բավական երկար ժամանակ գնացել էինք, վերջապես ինչ-որ տեղ կանգնեցինք, ճանապարհի եզրերին կույտերով փամփուշտներ կային, օճառ տվեցին, որ ռուսական բաղնիքում լողանայինք, իսկ այդ ընթացքում իրենք որոշում էին, թե, որ ընտանիքը որ գյուղ պիտի տարվի: Մեր յոթ հոգանոց ընտանիքը տարան Ալթայ երկրամասի, Բաեվյան շրջանի, Պակռովկա գյուղը և տեղավորեցին տիկին Մարիայի տանը, ով

ապրում էր իր տասնութ տարեկան աղջկա՝ Նինայի հետ։ Ի բարեբախտություն մեզ նրանք շատ ջերմ էին մեր նկատմամբ։ Սկզբի օրերին գյուղի բնակիչներից շատերը այցելեցին մեզ՝ ծանոթանալու իրենց նոր համագյուղացիների հետ, նրանք իրենց հետ նաև սնունդ էին բերում՝ ցորեն, կարտոֆիլ։ Գյուղի բնակիչների սիրալիր վերաբերմունքը, ինչ-որ չափ սովից ձերբազատվելը մեզ հնարավորություն տվեցին ավելի հեշտ ինտեգրվել աքսորի կյանքին։ Մնում էր միայն կարոտը հայրենիքի նկատմամբ, որը անհաղթահարելի էր։

Աքսորի երկրորդ ամսում կարմրուկով հիվանդացա, շատ ծանր էի տանում, շատ լավ հիշում եմ ինչպես էի մորս խնդրում, որ ինձ հետ տանի, մեր տուն տանի, որ լավանամ։

Գրեթե մեկ տարի ապրեցինք տիկին Մարիայի և Նինայի հյուրընկալությամբ։ Հայրս սկսեց աշխատել՝ կոլխոզի անասնապահ էր, իսկ մեծ եղբայրս՝ Գառնիկը, գյուղատնտեսական մեքենա էր վարում։

Այնուհետև կոլխոզի օգնությամբ, հորս և մեծ եղբորս ջանքերով գերաններից փոքրիկ տուն կառուցեցինք և տեղափոխվեցինք։ Մեծ քույրս՝ Մարիամը ամուսնացավ քրդախոս Վարդանի հետ, ում ընտանիքը ևս բնադատվել էր։ Մայրս զբաղվում էր տնային գործերով և խնամում էր երկու տարեկան եղբորս։ Ես և միջնեկ եղբայրս՝ Սաշան՝ ով հաշմանդամություն ուներ, սկսեցինք դպրոց գնալ, երկուսս էլ առաջին դասարան նստեցինք։ Եղբայրս չադապտացվեց դպրոցական նոր միջավայրին և շուտով դադարեց դպրոց հաճախել։ Ես մինչև վեցերորդ դասարան գնացի, բոլոր առարկաները գերազանց էի սովորում, բացի պատմությունից և հենց այդ առարկայի ուսուցչուհու քննադատություններն էլ պատճառ դարձան, որ դադարեցի դպրոց գնալ։

Մայրս բացի փոքր եղբորս խնամելուց, տան գործերով զբաղվելուց, երբեմն նաև սեզոնային աշխատանքների էր մասնակցում, ես օգնում էի նրան բոլոր հարցերում։

1955 թվականին <<Известия>> թերթում հայտարարություն տվեցին, որ ովքեր բռնադատվել են կարող են վերադառնալ իրենց հայրենիք՝ եթե ցանկանում են։ Մեծ եղբայրս անմիջապես գնաց շրջկենտրոն՝ ճշտելու տեղեկատվության իսկությունը։ Դիմում գրեց, որ վերադառնանք։ Դիմում գրելիս եղբորս համոզել էին, որ լավ մտածի, միգուցե մնա՞նք, չէին ուզում մեր ընտանիքի պես մարդկանց թողնել, խոստացել էին մնալու դեպքում նոր տուն, հողամաս և մեկի փոխարեն չորս խոշոր եղջերավոր կենդանի տալ։ Սակայն հայրս իր որոշման մեջ անդրդվելի էր և եղբայրս նրան դեմ գնալ չէր կարող։

Շատ ցորեն ունեինք, վաճառեցինք, այնուհետև վաճառեցինք նաև տունը և 1956 թվականին վերադարձանք։ Մեզ հետ բերել էինք երեսունութ լիտր տարողությամբ տարայով յուղ և մեկ տոննա ցորեն։

Տուն հասնելով անակնկալի եկանք. գյուղացի Ստյոպան իր ընտանիքով բնակվում էր մեր տանը։ Մի քանի օր ժամանակ խնդրեց մեզանից մինչև ապրելու համար նոր տեղ գտնի։ Այդ մի քանի օրը անցկացրեցինք հարևանների տանը, մինչև տունը ազատվեց։ Ո՛չ ես և ո՛չ էլ եղբայրս չշարունակեցինք մեր կրթությունը, իսկ 1963 թվականին ես ամուսնացա։

Սիրանուշ Ավետիսյան